

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

1. - Նախադասութեան մէջ միաւորուած բառերը ֆերականօրէն կապակցուում են իրար հետ մի որոշակի միտք արտայայտելու համար: Այդ կապակցութիւնը լինում է հոլովներով, համաձայնութեամբ, շարադասութեամբ, շաղկապներով եւ այլն: Ամեն լեզու ունի բառերի իրեն յատուկ օրէնքները, եւ դրանք խախտուելու դէպքում նախադասութեան միտքը, կամ նրա մէջ մտնող բառերից մէկի կամ միւսի իմաստը մութ եւ անհասկանալի է մնում: Երբեմն, սակայն, կապակցութեան ընդունուած կարգը խախտուում է, եւ այնուամենայնիւ արտայայտուած միտքը հասկանալի է լինում: Վերցնենք հետեւեալ օրինակը. ծառան, որ ականջներով չի լսում, մկաններով են լսել տալիս նրան: Սա մի բարդ ստորադասական նախադասութիւն է, որի մէջ երկրորդական նախադասութիւնն ընկած է գլխաւորի մէջտեղը: Գլխաւորի առաջին բառը՝ ծառան, իր հոլովական ձեւով չի կապուում նոյն նախադասութեան շարունակութեան հետ: Եթէ հանենք երկրորդական նախադասութիւնը, գլխաւորը կը մնայ հետեւեալ տեսքով՝ «ծառան մկաններով են լսել տալիս նրան»: Բայի խնդիրը՝ ծառան, պէտք է դրուէր տրական հոլովով, բայց դրուած է ուղղականով, այդ պատճառով վերջում դրուած է դրա նշանակութեամբ մի բացայայտիչ բառ՝ բայի պահանջած հոլովով՝ նրան, որով պէտք է դրուած լինէր առաջին բառը: Քերականօրէն կապակցուած ձեւով, ուրեմն, նախադասութիւնը պէտք է լինէր այսպէս՝ ծառային, որ ականջներով չի լսում, մկաններով են լսել տալիս: Նոյն նախադասութիւնը գրաբարում, որից քարգմանաբար բերուեց այստեղ, հետեւեալ

ձեւով է. ծառայ, որ ընդ ունկն ոչ լսէ, ընդ մկանունս տան լսել նմա (Եզեհիկ. Գիրք Առաջին, ԺԵ, էջ 43): Վերելում բացատրուած ձեւով վարուելով՝ որպէս բացայայտիչ դրուած բառը հանելով, նրա հոլովը տալով առաջին բառին եւ ստեղծելով ֆերականական կապակցութիւն, կը ստանանք հետեւեալը. ծառայի, որ ընդ ունկն ոչ լսէ, ընդ մկանունս տան լսել:

Այս երեւոյթը, երբ նախադասութեան մի անդամ ֆերականօրէն ընդունուած կանոններով չի կապակցուում նախադասութեան միւս անդամների հետ, բայց իմաստը հասկացուում է, կոչուում է անկապակցութիւն:

Անկապակցութիւնն ընդհանրապէս բանաւոր-խօսակցական լեզուին է յատուկ, երբ մարդ արագ խօսելով, կամ անուշադիր լինելով՝ իր խօսքը չի կազմում ֆերականական կանոններով: Բայց անկապակցութեան զանազան տեսակներ գտնուում ենք նաեւ գրաւոր լեզուի մէջ, թէ՛ աշխարհաբարում (տե՛ս Ա. Այտընեան, Քննական ֆերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866 թ., էջ 264-267, Մ. Աբեղեան Երկեր, Զ. հատոր, 1974 թ., Աշխարհաբարի շարահիւսութիւն, էջ 407) եւ թէ՛ մանաւանդ գրաբարում, որտեղ այն երեւան է գալիս աւելի յանախ եւ բազմազան ձեւերով: Անկապակցութիւն համարուում են ոչ ամեն տեսակի ֆերականական շեղումները, այլ միայն այնպիսիները, որոնք լինում են որոշ կանոններով, իմաստի մթութիւն չեն առաջացնում եւ սխալ չեն համարուում: Տեսնենք գրաբարի անկապակցութեան բնորոշ տեսակները:

2. ա. Վերելում բացատրուածն անկապակցութեան տեսակներից մէկն է,

նոյն տեսակից են նաեւ հետեւեալները:
Ամենայն մարդ եւ անասուն, որ գտցի ի դաշտի եւ ոչ մտցէ ի տուն, անկցի ի վերայ նորա կարկուտն . . . (Ելք, Թ, 19= ամեն մարդ եւ անասուն, որ կը գտնուի դաշտում եւ չի մտնի տուն, նրա վրայ կարկուտ կը թափուի): Կապակցուած ձեւով նախադասութիւնը պէտք է լինէր այսպէս. Ի վերայ ամենայն մարդոյ եւ անասնոյ, որ գտցի ի դաշտի եւ ոչ մտցէ ի տուն, անկցի կարկուտն. կամ փոխուած շարադասութեամբ՝ Անկցի կարկուտն ի վերայ ամենայն մարդոյ եւ անասնոյ, որ գտցի ի դաշտի եւ ոչ մտցէ ի տուն: Ներքեւի բոլոր օրինակները կարելի է այսպէս շրջել՝ երկրորդական նախադասութիւնը ետադաս դնելով: Գուրմ, գոր փորեաց եւ պեղեաց, ի նոյն անկցի ի խորխորատ (Սաղմոս, է, 16,= Գուրմ, որ փորեց եւ խորացրեց, (ինքը) կ'ընկնի նոյն խորխորատի մէջ): Առաջին բառը պէտք է լինէր ի նախորդով հայցական՝ ի գուրմ՝ ի նոյն խորխորատ անկցի, գոր փորեաց եւ պեղեաց: Մարդ, որ ոչ լուիցէ, գոր խաւսիցի մարգարէն յանուն իմ, եւ խնդրեցից զվրէժ ի նմանէ (Բ. Աւրեմ, ԺԸ, 19,= Այն մարդը, որ չըլսի իմ խօսքերին, որ մարգարէն կը խօսի իմ անունով, եւ նրանից վրէժ կը լուծեմ), փոխանակ՝ ի մարդոյ, որ ոչ լուիցէ, . . . եւ խնդրեցից զվրէժ: Մոլախիւնտը, որ առանձինն . . . սպանող է, նովիմք զմադձս հնացեալս հնարին բժիշկի հատանել (Եզեկի, Գիրք Առաջին, ԺԵ, էջ 47-48= Մոլախիւնդը, որ առանձին սպանող է . . . նրանով բժիշկները հնար են գտնում հնացած մադձերը հեռացնելու)՝ փոխանակ՝ մոլախնտիւր, որ առանձինն սպանող է, զմադձս հնացեալս հնարին բժիշկի հատանել: Մարդք, որ ոչ ի կապանաց զանգիտեն, եւ ոչ ի տանջանաց երկնչին, . . . ո՞վ է, որ կարէ նոցա դիմակաց լինել (Եղիշէ, էջ 59,= Մարդիկ, որ ոչ կապանք-

ներից են վախենում, ոչ տանջանքներից են երկնչում, . . . ո՞վ է, որ կարող է նրանց դիմադրել), փոխանակ՝ Մարդկան, որ ոչ ի կապանաց զանգիտեն, . . . ո՞վ է, որ կարէ դիմակաց լինել: Կամ փոխուած շարադասութեամբ՝ Ո՞վ է, որ կարէ դիմակաց լինել մարդկան, որ ոչ ի կապանաց զանգիտեն, ոչ . . .: Այնոքիկ, որ եւ ոչ անձանց խորհեցան բարի առնել եւ անուն յիշատակի յաշխարհի թողուլ, զի՞ արդեաւ եւ մեղադրութիւն մեր այնպիսեացն ի քահ պատահիցէ (Խոր., Գիրք Առաջին, Գ, էջ 10-11), փոխանակ՝ Այնոքիկ, որ եւ ոչ անձանց խորհեցան . . . , զի՞ արդեաւ մեղադրութիւն մեր ի քահ պատահիցէ:
 Պատահում է, որ երկրորդական նախադասութիւնն ամբողջութեամբ ընկնում է սկզբում, եւ նրա վերջում դրւում է ուղղականով բառը, իսկ գլխաւորն ընկնում է երկրորդականից յետոյ. Որ փրկեաց զնոսա հզարն, Տէր Ամենակալ անուն է նորա (Երեմիա, Ծ, 34), փոխանակ՝ Տէր Ամենակալ անուն է Հզարին, որ փրկեաց զնոսա: Կամ գլխաւորն է լինում սկզբում, իսկ նրանից յետոյ ընկնում է երկրորդական նախադասութիւնը. Ոչ կարեմք սուտ խաւսել այնմ, որ զամենայն ինչ գիտէ Աստուած, Փոխանակ՝ Ոչ կարեմք սուտ խաւսել Աստուծոյ, որ զամենայն ինչ գիտէ:
 Երբեմն գլխաւոր նախադասութեան շարունակութեան մէջ չի դրւում բացայայտիչ բառը, եւ միայն իմաստից հասկացում է դա: Օրինակ՝ Ամենայն մարդիկ, որ ըմպեն զնա՝ յիմարեցուցանէ զմիտսն (Ա. Եզր, Գ. 18), որի մէջ բացակայում է սեռականը՝ զմիտս նոցա: Կապակցուած ձեւով պէտք է լինէր՝ Յիմարեցուցանէ զմիտս ամենայն մարդկան, որ ըմպեն զնա:
 Երբեմն գլխաւոր նախադասութեան առաջին բառը դրւում է ոչ թէ ուղղականով, այլ այն հոլովով (եւ նախորդով), որով

դրուած է յարաբերականը՝ հոլովների ձգողութեան օրէնքով: Օրինակ Ամենայնի, որում շատ տուաւ, շատ խնդրեացի ի նմանէ (Ղուկ. ԺԲ, 48): Այս նախադասութեան մէջ ամենայն բառը չի դրուել ո՛չ բացառականով, ինչպէս նախադասութեան իմաստն է պահանջում, ո՛չ էլ ուղղականով՝ վերելի օրինակների նման, այլ նմանուելով յարաբերականի հոլովին՝ դրուել է տրականով: Կապակցուած ձեւով պէտք է լինէր՝ Յամենայնէ, որում շատ տուաւ՝ շատ խնդրեացի, կամ փոխուած շարադասութեամբ, շատ խնդրեացի յամենայնէ, որում շատ տուաւ:

2. բ. Որ յարաբերական դերանունը նախադասութեան իմաստի պահանջած հոլովով դրուելու փոխարէն երբեմն դրուում է ուղիղ ձեւով, բայց նրանից յետոյ դրուում է մի այլ բառ, սովորաբար որեւէ դերանուն՝ պահանջուած հոլովով: Օրինակ՝ Իսկ արդ ո՞ր Կարէ չար ինչ խորհել ի վերայ ազգիս այսորիկ, որք ունին այդպիսի գեղեցկութիւն կանայք նոցա (Յուդիթ, Ժ, 18): Որք դերանունը պէտք է դրուէր սեռականով, ինչպէս վերջում աւելադրութեամբ դրուած է նոցա բառը: Կապակցուած ձեւով կը լինի այսպէս՝ . . . ո՞ր կարէ չար ինչ խորհել ի վերայ ազգիս այսորիկ, որոց կանայք ունին այդպիսի գեղեցկութիւն: Ունիմք շինուածս յերկինս, որ ոչ երեսին արքունիքն առ նոքար (Նդիշէ, էջ 147), փոխանակ՝ . . . առ որովք ոչ երեսին արքունիքն:

Երբեմն, սակայն, պահանջուած հոլովով բացայայտիչ բառը չի դրուում, եւ միայն որ յարաբերականի ուղիղ ձեւով հասկացուում է դրա իմաստը, օրինակ՝ Սկսան հարկանել ի ժողովրդենէ անտի վիրաւորս . . . առ ճանապարհան, որ մին ելանէր ի Բեթել, եւ միւսն ելանէր ի Գաբաա (Դատաւորք, Ի, 31), փոխանակ՝ . . . Յորոց մին ելանէր ի Բեթել:

Երբեմն որ յարաբերականի տեղ դրուում է գի շաղկապը, օրինակ՝ Գոյ աստ

այր մի ի դրան քում, գի իրքն այդ նովաւ վնարին (Ագաթ., 44, էջ 36, = այստեղ քո պալատում կայ մի մարդ, որի միջոցով այդ գործը գլուխ կը գայ), փոխանակ՝ որով վնարին իրքն այդ: Ո՞չ այդ այն Մուշեղ է, գի զարբայն Պապ հրամանաւ դորա եւ դորին խորհրդով զարավարքն Յունաց սպանին (Բուզանդ, 5-րդ դար., ԼԵ, էջ 360), փոխանակ՝ որոյ հրամանաւ եւ խորհրդով զարբայն Պապ սպանին: Խնդրեաց էած անտի կին ի կայսերական տոհմէն, գի անուն էր նորա Ողոմպի (Բուզանդ, 4-րդ դար., ԺԵ, էջ 192), փոխանակ՝ որոյ անուն էր Ողոմպի:

2. գ. Նախադասութեան համադաս անդամները դրուում են նոյն քերականական ձեւով՝ նոյն հոլովով, նոյն նախդրով ու հոլովով եւ այլն: Սակայն երբեմն կապակցութեան այս կանոնաւոր ձեւը խախտուում է, եւ նոյն պաշտօնն ունեցող անդամները դրուում են տարբեր բառ ձեւերով: Օրինակ՝ Յապատմբելն նորա ի Նարուհոդոնոտրայ արքայէ եւ անցանելոյ գերդամբքն, . . . խստացոյց զպարանոց իւր (Բ Մնացորդաց, ԼԶ, 13, = Երբ նա ապստամբեց Նարուհոդոնոտր արքայից եւ խախտեց երդումը (կամ՝ ապստամբելով եւ խախտելով), խստացրեց իր պարանոցը): Այստեղ նոյն պաշտօնն ունեցող երկու բառերից առաջինը դրուած է ի նախդրով հայցական՝ յապատմբելն, իսկ միւսը տրական հոլովով՝ անցանելոյ, որով խախտուել է համադաս բառերի նոյնաձեւութեան կանոնը: Երկուսն էլ նոյն հոլովաձեւով պէտք է լինէին՝ յապատմբել, յանցանել:

Նոյնպիսի անկապակցութեան օրինակներ են եւ հետեւեալները. Ի ժողովքն բազում ժողովրդոց եւ ըստ քաղաքաց քաղաքաց եկելոցն առ նա, ասէ առկաւ (Ղուկաս, Լ, 4, = երբ շատ ժողովուրդ հաւաքուեց եւ բոլոր քաղաքներից մարդիկ եկան նրա մօտ, առկալով ասաց), փոխանակ՝

ի ժողովել . . . եւ . . . ի գալ: Ապա ժողով լինէր նախարարացն եւ իշխանացն, գործակալքն եւ գաւրագլուխքն, պետք . . . (Բուգ., 3րդ դպր., Ի, էջ 84,= ապա հաւաքուում էին նախարարները, իշխանները, գործակալները, գորագլուխները, պետերը . . .) փոխանակ՝ ժողով լինէր նախարարացն եւ իշխանացն, գործակալացն, գաւրագլխաց, պետաց՝ կամ՝ ժողովէին նախարարքն, իշխանքն, գործակալքն, գաւրագլուխքն, պետք:

Եւ ոչ ոք էր որ մնացեալ էր առ թագաւորին, եւ ոչ գունդ եւ այրեւծի, բայց միայն սակաւ սպասաւորաւք հանդերձ եւ որսոցն պառականաւք եւ ուսուցիչայ մարդկանն եւ խառնիմաղանջ խորանապահ գաւրունն եւ ուսուցիչայ գաւրաւքն եւ տիկնանն հանդերձ եւ արքայորդին մանուկն Արշակ (Բուգ., 3-րդ դպր., Ի, էջ 84): Այստեղ ընդգծուած բառերը, որպէս նախադասութեան համադաս անդամներ, պէտք է դրուած լինէին նոյն հոլովական ձեւով՝ ուղղականով, ինչպէս առաջին երկու եւ վերջին ընդգծուած բառերն են, ուրեմն՝ սպասաւորք, պառականք, եւ այլն, եւ կամ ամբողջը պիտի լինէր նոյնութեամբ, ինչպէս բերուած է, բայց առանց վերջին եւ շաղկապի՝ Ոչ ոք էր, որ մնացեալ էր առ թագաւորին, եւ ոչ գունդ եւ այրեւծի, բայց միայն սակաւ սպասաւորաւք հանդերձ . . . արքայորդին մանուկն Արշակ:

Ապա տայր հրաման Շապուի արքայ Պարսից բերել շոթայս եւ արկանել ի պարանոցն Արշակայ, . . . եւ խղացուցանել զնա ի յԱնդմշն, եւ պնդեալ զնա մինչեւ անդէն մեղցի (Բուգ., 4րդ դպր., ԾԴ, էջ 260): Այս նախադասութեան մէջ եւ տայր հրաման բայի նոյն պաշտօնն ունեցող խնդիրներից առաջին երեքը դրուած են անորոշ դերբայով՝ բերել, արկանել, խղացուցանել, իսկ վերջինը անցեալ դերբայով՝ պնդեալ, սա նոյնպէս պէտք է լինէր անորոշ դերբայով՝ պնդել:

2. դ. Նոյն ենթական ունեցող անցեալ դերբայի եւ դիմաւոր բայի միջեւ երբեմն դրուում է եւ շաղկապ, որի հետեւանով նախադասութեան սկիզբը քերականօրէն չի կապուում նրա շարունակութեան հետ՝ սկսուում է մի ձեւով եւ վերջանում է մի ուրիշով: Օրինակ՝ Ապա ռիացեալ թագաւորն ընդ պատանեկին Գնելոյ եւ բագում անգամ հալածական առնէր զնա (Բուգ., 4րդ դպր. ԺԵ, էջ 184): Այս միտքը կապակցուած ձեւով պէտք է արտայայտուած լինէր կամ դերբայական դարձուածով պարզ նախադասութեամբ առանց եւ-ի, կամ եւ շաղկապով եւ դիմաւոր բայերով երկու համադաս նախադասութեամբ, այսպէս՝

1) Ապա ռիացեալ թագաւորն ընդ պատանեկին Գնելոյ՝ բագում անգամ հալածական առնէր զնա: 2) Ապա ռիացաւ թագաւորն ընդ պատանեկին Գնելոյ եւ բագում անգամ հալածական առնէր զնա: Բուգանդի բնագրից բերուած նախադասութիւնը այս երկու կանոնաւոր ձեւերի անքերական խառնուրդ է: Հետեւեալ օրինակներն անկապակցութեան այս նոյն տեսակից են, ուստի բերուում են առանց կանոնաւոր ձեւերը նշելու: Եւ հարեալ չորս ցիցս ի գետինն, երկուս ոտիցն եւ երկուս ձեռացն, եւ պրկեցին զնա (Ագաթ., տես 198, էջ 114): Իսկ այլոցն առ ժամանակ մի թողութիւն արարեալ եւ գամեան վնասուն պատնաս արկանէր զկապելովքն (Նդիշէ, էջ 20): Մոնչելով բարբառ արձակեալ եւ ասէ (Նդիշէ էջ 44): Գուցէ տեսեալ զարջառ եւ զոչխար եղբար քո մոլորեալս ի քանապարհի եւ անտես առնիցեն զնոսա (Նրկր. Աւրինաց, ԻԲ, 1): Իբրեւ ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր եւ նովին նշանագրով տանէր (Կորին, էջ 44): Ընկալեալ զըրտեսսն եւ ընդ այլ քանապարհ արձակեաց (Թուրթ Յակովբայ, Բ, 25):

Կարող է անցնել դերբայի փոխարեն անորոշ դերբայի գործիականը լինել, ինչպես հետեւեալ օրինակում՝ Երէցն Մրջիւնիկ անուն տալով յեկեղեցուցն Ողոմպեայ տիկնոցն ընձեռել զմահուն գործ եւ սպանանէր (Բուգ., 4րդ դպր., էջ 194):

Նոյնը լինում է նաեւ ուրիշ շաղկապներով եւ շաղկապական բառերով, օրինակ՝ ի ծննդեանէն եւեթ մոլորութեամբ լեալ, մինչ նովիմք եւ վախճանեցաւ (Խոր., էջ 192): Եւ նորա անյուսացեալ յինէն, նմին իրի առաքեաց գհահանայապետն Հիւրկանոս (Խոր., էջ 140):

2. Ե. Ստորադասական շաղկապով կամ մի յարաբերական բառով կապուած երկրորդական նախադասութեան բայը, որ պէտք է դրուի դիմաւոր ձեւով, երբեմն դրուում է անցեալ դերբայով, իսկ գլխաւորինը՝ դիմաւոր ձեւով: Օրինակ՝ Զոր իբրեւ լուեալ արքային, ասէ (Բուգ., 4րդ դպր., ԺԵ, էջ 192): Այս նախադասութիւնը խառնուրդ է հետեւեալ երկու կանոնաւոր ձեւերի. 1) բարդ ստորադասական նախադասութիւն դիմաւոր բայերով՝ գոր իբրեւ լուաւ արքայն, ասէ. եւ 2) պարզ նախադասութիւն դերբայական դարձուածով, առանց շաղկապի՝ գոր լուեալ արքային՝ ասէ: Բուզանդի բնագրում խօսքը կազմուած է այս երկուսի անհետեւողական խառնուրդով: Այլ օրինակներ՝ ապա թագաւորն Պարսից, քանզի գայս լուեալ ի քաղէիցն, տանիկ ուղտուք արձակէ ի Հայս արս գողոյ եւ գջրոյ (Բուգ., 4րդ դպր., ԾԴ, էջ 256), փոխանակ 1) առանց շաղկապի՝ գայս լուեալ . . . արձակէ, կամ 2) դիմաւոր բայով՝ քանզի գայս լուաւ, . . . արձակէ: Այլ թեպէտ եւ վաղու լուեալ գրաւթն, ոչ ինչ ժամանեաց հասանել յամբովկ գործոյն պատերազմի (Ագաթ. 18, էջ 24): Զոր թեպէտ եւ վաղ գիտացեալ Մեծին Ներսիսի, ոչ յառաջ քան զկոտորելն

ժամանեաց հասանել (Խոր., էջ 289):

2. Գ. Բարդ ստորադասական նախադասութեան կազմի մէջ մտնող երկրորդական նախադասութիւնը, որ գլխաւորի հետ կապուում է մի ստորադասական շաղկապով, երբեմն դիմաւոր բայի փոխարեն ունենում է անորոշ դերբայ, որից առաջանում է ֆերականական անհետեւողականութիւն: Օրինակ՝ Պարտ է, զի ի դաշտէն ի լեռնակողմն փոխել (Փարպ. էջ 298): Այս նախադասութիւնը խառնուրդ է հետեւեալ երկու ձեւերի. 1) պարզ նախադասութիւն դերբայական դարձուածով, այդ դէպքում աւելորդ է գի շաղկապը՝ պարտ է ի դաշտէն ի լեռնակողմն փոխել, եւ 2) բարդ նախադասութիւն, որի մէջ երկրորդականը կը սկսուէր գի շաղկապով եւ կ'ունենար դիմաւոր բայ՝ Պարտ է, զի ի դաշտէն ի լեռնակողմն փոխիցուք (այս տեսակի անկապակցութեան բացատրութիւնը տես Վ. Զալըխեան, Բնական ֆերականութիւն հայկազնեան լեզուի, Վիեննա, 1885, էջ 460): Այլ օրինակներ՝ Արձակեաց մեծաւ հանդերձաւ, քազում պատուիրանաւ, զի գՅուդա ինքնին ի գլխովին գրոամք արկանել (Բ. Մակ., ԺԴ., 13), փոխանակ՝ 1) Արձակեաց . . . գՅուդա . . . գրոամք արկանել, կամ 2) Արձակեաց . . . զի գՅուդա . . . գրոամք արկանիցեն (կամ՝ արկցեն): Յտ հրաման գՅուեքիոս արկանել ի քանդ, (Բուգ., 4րդ դպր., Ը, էջ 156), փոխանակ՝ 1) ետ հրաման գՅուեքիոս արկանել ի քանդ, կամ 2) ետ հրաման, զի գՅուեքիոս արկցեն (կամ արկանիցեն) ի քանդ: Հրաման տայր վասն առաքինոյն Գայիանեայ, թե նախ գիցզուն ընդ ծործորակսն հանել եւ ապա սպանանել (Ագաթ., 205, էջ 118), փոխանակ՝ 1) Հրաման . . . տայր . . . հանել, կամ 2) Հրաման տայր, . . . թե (=զի) հանցեն:

3. Անկապակցութեան վերելում նկարագրուած ձեւերը, որքան էլ ֆերական-

նօրէն անկանոն են, այնուամենայնիւ, եթէ կարելի է տեսլ, մի տեսակ օրինակա-նացուած են: Բայց գրաբարեան հին երկերի մէջ հանդիպում են նախադասութիւններ, որոնք կազմուած են ֆերականական այնպիսի ձեւերի խառնուրդով, որոնք իրար հակասող եւ բացառող են: Այդպիսի անհետեւողական ձեւերը լեզուի օրէնքների բացայայտ խախտում են ներկայացնում եւ, ինչպէս կը տեսնենք ներքեւում, ամենայն հաւանականութեամբ բնագրի աղետաման հետեւանք են: Տեսնենք այս տեսակի անհետեւողականութիւններից հետեւեալները:

3. ա. Անցեալ դերբայով եւ եմ բայով կազմուող բաղադրեալ ժամանակները գրաբարում երկու ձեւ են ունենում. դրանք կազմուած են եմ բայի տարբեր դէմքերով եւ համապատասխան ենթականերով՝ (ես) տեսեալ եմ, (դու) տեսեալ ես եւ այլն, կամ բոլոր դէմքերի եզակի եւ յոգնակի թուի համար վերցուած է բայի միայն եզակի երրորդ դէմքը, որի հետ դրուած է սեռական հոլովով մի խնդիր՝ ենթակայական սեռական՝ իմ տեսեալ է, ես տեսեալ է, մեր տեսեալ է եւ այլն: Այս վերջինները ֆերականօրէն անենթակայ նախադասութիւններ են, քանի որ դրանց սեռական խնդիրները՝ իմ, ես, մեր, ձեր, եւ այլն, որ աշխարհաբար թարգմանուած են որպէս ենթակայ, ոչ թուով, ոչ էլ դէմքով չեն համաձայնում բայի հետ, որը միշտ անփոփոխ կերպով եզակի երրորդ դէմքով է դրուած, ուստի դրանք՝ սեռականները, գրաբար կապակցութիւններում չեն կարող դիտուել որպէս ենթակայ:

Հագուադէպ գործածութեամբ, սակայն, այս երկու տարբեր կազմութիւնների (ես տեսեալ եմ - իմ տեսեալ է) խառնուրդ է դուրս գալիս: Օրինակ՝ . . . առ պարսպան Նրուսադէմի, զոր էին նոցա սրբալ (Նէեմի, Բ, 13), փոխանակ՝ . . . զոր էին նոքա սրբալ, կամ 2) զոր

էր նոցա սրբալ: Այսպիսի օրինակ է նաեւ հետեւեալը՝ իմ ի մանկութենէ իմմէ համակ ի նակատու եւ ի կոխու մտեալ եմ . . . (Բուգ., 5րդ դպր., Ե, էջ 308); փոխանակ՝ 1) ես մտեալ եմ, կամ 2) իմ մտեալ է:

3. բ. Բաղադրեալ ժամանակների վերոյիշեալ ենթակայական սեռականով ձեւերը, եթէ անցեալ դերբայն անցողական բայից է, կրաւորական իմաստ չեն ունենում, այլ միայն ներգործական: Այսպէս, իմ տեսեալ է ձեր նշանակում է ես տեսել եմ, ի տարբերութիւն ես տեսեալ եմ ձեւի, որ կարող է ե՛ւ ներգործական ե՛ւ կրաւորական իմաստ ունենալ՝ ես տեսել եմ, ես տեսնուել եմ: Բայց երբեմն ենթակայական սեռականով ձեւերի հետ հայցական խնդրից բացի դրուած է նաեւ բացառական հոլովով մի ներգործող խնդիր, որ կրաւորական բայերին է յատուկ եւ ֆերականօրէն չի կապուած հայցականով դրուած ուղիղ խնդրի հետ: Օրինակ՝ . . . ուր գառաջինն էր շինեալ զկեղեցիս ի հաւոյն նոցա Գրիգորէ (Բուգ., 3րդ դպր., ԺԹ, էջ 76): Պէտք է լինէր կամ 1) . . . ուր գառաջինն էր շինեալ զկեղեցիս հաւոյն նոցա Գրիգորի (=որտեղ առաջին կեղեցիս շինել էր նրանց պապ Գրիգորը), կամ 2) . . . ուր առաջինն (ուղղական) էր շինեալ կեղեցիս ի հաւոյն նոցա Գրիգորէ (=որտեղ առաջին կեղեցիս շինուած էր նրանց պապ Գրիգորի կողմից): Զի թեպէտ եւ յԱստուծոյ էր պարգեւեալ գլաղթութիւնն յամս կենաց երանելոյն Թէոդոսի . . . (Խոր., էջ 310): Պէտք է լինէր, կամ 1) թեպէտ եւ Աստուծոյ էր պարգեւեալ գլաղթութիւնն . . . (=թեպէտ աստուած էր պարգեւել յաղթութիւնը), կամ 2) թեպէտ եւ յԱստուծոյ էր պարգեւեալ յաղթութիւնն (=թեպէտ եւ Աստուծոյ էր պարգեւուած յաղթութիւնը):

Երբեմն ներգործական բայի պարզ ժամանակի հետ գործածուած գտնում ենք հայցականով ուղիղ խնդիր եւ բացա-

ուսկանով ներգործող խնդիր, որոնք ըստ լեզուի կանոնների չեն կարող միեւնոյն բայի հետ դրուել եւ բացառում են միմեանց: Օրինակ՝ . . . ուր արգելին գնա ի խուռն պատերազմին ի զարաց անտի (Բուզ., 5րդ դպր., է, էջ 316): Սա անկանոն խառնուրդ է հետեւեալ երկու կապակցութիւնների. 1) ուր արգելաւ նա . . . ի զարաց անտի (=որտեղ շրջապատուեց (շրջապատուել էր) նա զօրքերի կողմից, եւ 2) ուր արգելին գնա . . . զարբն (=որտեղ շրջապատեցին (շրջապատել էին) նրան զօրքերը:

4. Քերականական անկանոնութեան այս վերջին երկու (3-ա., 3. բ.) ձեւերը, ինչպէս նշուեց վերելում, կարող են լինել բնագրի աղանատման հետեւանք, մի բան, որ կարող է պարզել միայն այդպիսի ձեւեր պարունակող բնագրերի տարբեր ձեւագրերի համեմատութիւնը: Արդէն որոշ երկերի տարբեր հրատարակութիւնների եւ ձեւագրական այլընթերցումների համեմատութիւնը երեւան է հանում բնագրի այդպիսի աղաւաղման փաստեր: Այսպէս, օրինակ, Եզնիկի «Նոճ Աղանդոց» գրքի հրատարակութիւններում (Վեներտիկ, 1826, 1850, Կ. Պոլիս 1871, Թիֆլիս, 1914 եւ այլն) կայ հետեւեալ ընթերցումը. Եւ ոչ որս երբեք, որպէս մարդկան, արարեալ են վիշապաց (Եզնիկ, Գիրք առաջին, էջ 73): Այս նախադասութեան կազմութիւնը համապատասխան է վերելում՝ 3. ա. կէտում նկարագրուած անկանոնութեանը: Այն ուղղում է գոյութիւն ունեցող միակ ձեւագրով, որի մէջ բացակայում է են բայը (տես Հ. Անտոնան, «Քննութիւն եւ Համեմատութիւն Եզնիկայ նորագիտ ձեւագրին», Հայագիտական հետազոտութիւններ, Երեւան 1976 թ., էջ 143): Ըստ այդմ ուղղուած է «Նոճ Աղանդոց»ի 1959 թ. Փարիզի հրատարակութեան մէջ այսպէս՝ Եւ ոչ որս երբեք, որպէս մարդկան, արարեալ վիշապաց:

Այլ օրինակներ. Աշխարհն այն, ուստի դոցա եկեալ են: Այսպիսի անկանոն ընթերցում, համապատասխան վերելի 3. ա. կէտի, ունեն Բուզանդի վեներտիկեան 1832, 1914, 1983 թ. թ. հրատարակութիւնները (Բուզ., 4րդ դպր., գլ. Ե), իսկ այլ հրատարակութիւններ՝ Ս. Պետերբուրգի 1883, Վեներտիկի 1889, Թիֆլիսի 1912 թ.թ. տալիս են ուղիղ ձեւը՝ Աշխարհն այն, ուստի դոգա եկեալ են (Բուզ., էջ 140):

Եղիշէի «Վասն Վարդանայ . . .» գրքի 1957 թ. ֆննական հրատարակութեան 51րդ էջի ծանօթագրութեան համաձայն մի քանի ձեւագրեր եւ տպագիր հրատարակութիւններ ունեն այն նոյն՝ 3. ա. կէտի անկանոնութեանը համապատասխան հետեւեալ ընթերցումը. . . . ձեր արարեալ եւ կատարեալ իցէք, մինչդեռ ուրիշ ձեւագրեր եւ տպագիր հրատարակութիւններ ունեն ուղիղ ձեւը . . . ձեր արարեալ եւ կատարեալ իցէ (Եղիշէ, էջ 51):

Ազաթանգեղոսի գրքի 1909 թ. ֆննական հրատարակութեան 127րդ էջի 13րդ ծանօթագրութեան համաձայն մի քանի ձեւագրեր եւ տպագրութիւններ ունեն վերելի 3. բ. կէտի համապատասխան հետեւեալ անկանոն ընթերցումը. Զիւրդ էր հնար այդմ լինել, եթե ոչ յԱստուծոյ էր տուեալ գիրաւունս յաղթութեանն: Բայց ուրիշ ձեւագրեր եւ տպագրութիւններ տալիս են ուղիղ եւ կանոնաւոր ձեւը՝ . . . եթե ոչ Աստուծոյ էր տուեալ գիրաւունս յաղթութեանն (Ազաթ., էջ 136):

Աստուածաշնչի շատ հրատարակութիւններում՝ Վեներտիկի 1805, 1860թ.թ. եւ այլն գտնում ենք հետեւեալը. Եւ ահա շնորհեալ է քեզ յԱստուծոյ զամենեւեան, որ են ընդ քեզ ի նաւիդ (Գործք Առաքելոց, Իէ, 24): Սա նոյնպէս համապատասխան է վերը նկարագրուած 3. բ. կէտին: Նոյն նախադասութեան ուղիղ ձեւը գտնում ենք Աստուածաշնչի այլ հրատարակութիւններում՝ Ս. Պետերբուրգի 1817 եւ Կ.

Պոլսի 1895թ. այսպես. — Եւ ահա շնորհեալ է քեզ Աստուծոյ զամենեսեան, որ եմ ընդ քեզ ի նաւիդ (=եւ ահա Աստուած շնորհել է քեզ այն բոլորը, որոնք քեզ հետ եմ նաւի մէջ): Ուղիղ ձեւն անշուշտ, այստեղ եւս ունի ձեռագրական հիմնաւորում:

Սակայն միայն այս անկանոն ձեւերը (3.ա., 3բ) չեն, որ ուղղում են ձեռագրերի եւ տպագիր հրատարակութիւնների տարբեր ընթերցումներով: Անկապակցութեան վերելում նկարագրուած (2.ա. 2.գ.) ձեւերը նոյնպէս յանախ ուղղում են եւ կարող են ուղղուել նոյն երկի տարբեր ձեռագրերի եւ հրատարակութիւնների օգնութեամբ:

Այսպէս, օրինակ, վերելում դրուած 2. ա. կէտին համապատասխան անկապակցութիւն է հետեւեալը. Դուք որ թողէ՛ք զիս, . . . եւ մատնեցից զձեզ ի սուր (Նսայի, ԿՆ, 11-12), որ գտնուում ենք Աստուածաշնչի 1805, 1860 եւ այլ բնականների հրատարակութիւններում: Ուղիղ ձեւը կայ 1817 թ. Ս. Պետրբուրգի եւ 1895 թ. Կ. Պոլսի հրատարակութեան մէջ, որտեղ բացակայում է որ յարաբերական դերանունը՝ Դուք թողէ՛ք զիս, . . . եւ մատնեցից զձեզ ի սուր:

Համաձայն Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց» գրքի 1913 թ. Տփղիսի ֆննական հրատարակութեան տողատակի՝ մի քանի ձեռագրեր եւ տպագիր հրատարակութիւններ ունեն այսպիսի ընթերցում՝ Իսկ ի լինել սխալանաց ինչ Զրադաշտի առ տիկինն եւ հակառակութեան ի ներքս անկանելոյ, պատերազմ ի վերայ նորա յարուցանէ . . . (Խոր., էջ 56, 3րդ ծանօթագրութիւն), որի մէջ նոյն պաշտօնով երկու անորոշ դերբայներից մէկը դրուած է հայցականով եւ ի նախդրով՝ ի լինել, միւսը տրականով՝ անկանելոյ: Սա համապատասխան է վերելի 2. գ. կէտին: Ուրիշ տպագրութիւններ եւ ձեռագրեր, սակայն, տալիս են նիշտը՝ երկու դերբայն

էլ ուղիղ ձեւով, որ եւ դրուած է բնագրում՝ Իսկ ի լինել սխալանաց ինչ Զրադաշտի առ տիկինն եւ հակառակութեան ի ներքս անկանել . . .:

Աստուածաշնչի Վենետիկի 1805, 1860, Ս. Պետրբուրգի 1817 եւ այլ բնութի հրատարակութիւններում կայ հետեւեալը. Թաւրափեալ գճորձս իւր եւ ասէ ցնոսա (Գործք Առաքելոց, ԺԸ, 6), որը համապատասխան է վերելի 2. ք. կէտին: Այն ուղղուած է 1895 թ. Կ. Պոլսի հրատարակութեան մէջ՝ Թաւրափեաց գճորձս իւր եւ ասէ: Ուղղումն այստեղ եւս, ինչպէս նախորդ օրինակներում, անշուշտ կատարուած է որեւէ ձեռագրի կամ ձեռագրերի հիման վրայ:

Այս նոյն տեսակի անկապակցութիւն է նաեւ հետեւեալը. Ոմն ի հրեշտակաց յանմահիցն գնդէն ստամբակեալ եւ ի բաց գնաց, որ դրուած է Եղիշէի «Վասն Վարդանայ . . .» գրքի 1957 թ. հրատարակութեան 37րդ էջի տողատակի 5րդ ծանօթագրութեան մէջ որպէս մի քանի ձեռագրերի եւ տպագրութիւնների այլընթերցում, մինչդեռ ուրիշ աւել շատ ձեռագրեր եւ տպագրութիւններ դնում են ուղիղ եւ քերականօրէն կապակցուած ձեւը՝ ոմն ի հրեշտակաց յանմահիցն գնդէն ստամբակեալ եւ ի բաց գնացեալ . . . զանլինելի յոյսն առաջի դներ:

Ըստ Ագաթանգեղոսի 1909 թ. Տփղիսի ֆննական հրատարակութեան 74րդ էջի 15րդ ծանօթագրութեան մի քանի ձեռագրեր եւ տպագիր հրատարակութիւններ ունեն՝ Զմարդիկն զարհուրեցուցանեին զի ի պաշտաման դիցն յոլովելոյ, որ համապատասխան է անկապակցութեան վերելի 2. գ. տեսակին: Ուրիշ աւելի շատ ձեռագրեր եւ տպագիր հրատարակութիւններ ունեն նոյնի նիշտ ընթերցումը՝ Զմարդիկն զարհուրեցուցանեին վասն պաշտաման դիցն յոլովելոյ:

Վերելում՝ 2. գ. կէտում, Ղազար

Փարպեցուց քերուած օրինակի համար հրատարակիչները տողատակի 29րդ ծանօթագրութեան մէջ նշել են՝ «Թերեւս՝ պարտ է մեզ ի . . .» այսինքն ենթադրել են նախադասութեան հնարաւոր երկու ուղիղ ձեւերից, որ նշուեց վերելում, առաջինը:

Անկապակցութեան տարածուած ձեւերին (2.ա. 2.գ.) զուգահեռ կապակցուած ձեւերի առկայութիւնը ձեռագրերում եւ տպագիր հրատարակութիւններում կարելի է ընդունել երկու կերպ: Կամ դրանց անկապակցութեան ձեւերը գալիս են արտագրող գրիչներից եւ հրատարակիչներից, որպէս բնագրի աղաւաղում, եւ կամ, ընդհակառակն, անկապակցութիւնը պատկանում է հեղինակին, իսկ դրանց ուղղուած ձեւերը ծագում են արտագրող գրիչներից եւ հրատարակիչներից, որոնք անկապակցութիւնը սխալ համարելով եւ չընդունելով՝ ուղղել են լեզուի փերականակն կանոններին համապատասխան:

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ագաթ.- Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչեանի եւ Ս. Կամայեանի (Տփղիսի 1909 թ. քննական հրատարակութիւնից վերատպութիւն աշխարհաբար թարգմանութեանը զուգահեռ), Երեւան, 1983:

Բուգ.- Փաւստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, Երեւան, 1987 (Վերատպութիւն Գ. Պատկանեանի՝ 1883 թ. Պետերբուրգում կատարած հրատարակութեան):

Եզնիկ.- Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ Աղանդոց, Թիֆլիզ, 1914:

Եղիշէ.- Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին, աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեանի, Երեւան, 1957:

Խոր.- Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913:

Կորիւն.- Վարդ Մաշտոցի, բնագիրը ձեռագրական այլընթերցուածներով, թարգմանութեամբ . . . ի ձեռն Մ. Արեղեանի, Երեւան, 1941:

Փարպ.- Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանցի (Տփղիսի 1904 թ. քննական հրատարակութիւնից վերատպութիւն աշխարհաբար թարգմանութեանը զուգահեռ), Երեւան, 1982:

Մնացած համառոտագրութիւնները Աստուածաշնչի գրքերին են, դրանք գիտութեան մէջ յայտնի եւ ընդունուած են, ուստի այստեղ չեն քերուած:

ՊՕՂՈՍ ԾԱՐԱԲԻՍԱՆԵԱՆ